Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

369
4-21

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ ՈԳՆՈՂ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՈՊՐ-ի ԲՋԻՇՆԵՐԻ ՀԱԽՀ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

(Հաստատված է ՄՈՊՐ-ի Կենտկոմից 1924 թ. սեպտեմբերի 9-ին)

369
4-21

ՀԱԽ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Библиотека
7/II. 1922
ՄՈՍԿՎԱ, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924

44.355

Տպագր. Տրեստի I-ին Տպար. № 986 Տիրաժ 1000

17 MAY 2013
1 MAR 2010
300
1363-44
1189

I. ԲՋԻՋԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

1. Բջիջը, որպես ՄՈՊՐ-ի ստորին կազմակերպություն, նպատակ ունի նյութապես և բարոյապես ոգնելու հեղափոխության մարտիկներին, զարթեցնելով յուր անդամների փութաջանությունն ու ինքնագործունեությունը։

2. Այս նպատակներին հասնելու համար բջիջը՝

ա, գրավում և նոր անդամներ,

բ, գաստիարակչական աշխատանք և կատարում նրանց մեջ՝ միջազգային դասակարգային պայքարի վոգով,

գ, անց և կացնում ագիտկամպանիաներ, գործադրելով դրա համար բանավոր և տպագրական պրոպագանդայի բոլոր տեսակները,

դ, մասնակցում է բողոքի ցույցերի կազմակերպության,

ե, ամեն հնար գործ է դնում ՄՈՊՐ-ի միջոցներն ավելացնելու համար,

զ, ժողովում է ՄՈՊՐ-ի գործունեության վերաբերյալ տեղեկություններ և իրազեկ է անում վերադաս մարմիններին,

ը, կատարում է վերադաս մարմինների բոլոր դիրեկտիվներն ու հանձնարարությունները։

3. ՄՈՊՐ-ի բջիջներ կազմակերպվում են բոլոր ձեռնարկություններին, հիմնարկություններին, խբբ-

14 MAR 2013

հիթ-ընթերցարաններին, դպրոցներին, զորամասերին և այլ կազմակերպություններին առընթեր, յեթե ՄՈՊՐ-ի անդամների թիվը 5-ից պակաս չէ։

Ծանոթություն 1. ՄՈՊՐ-ի անհատ անդամները մտնում են մոտակա բջիջի կազմի մեջ։

Ծանոթություն 2. Խոշոր ձեռնարկություններում թույլ է տրվում կազմակերպել համքարական (ցեխ) բջիջներ, որոնց ղեկավարում է ձեռնարկության միացյալ բյուրոն։

II. ԱՆԴԱՄՆ. ԿԱԶՄՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Բջիջի անդամ կարող է լինել 16 տարին լրացրած ամեն մի աշխատավոր, առանց որևե սահմանափակության, որ զրկված չէ ընտրելու և ընտրվելու իրավունքից, համակրում է կոմունիզմի համար մղվող դասակարգային պայքարին և մասնակցում է բջիջի աշխատանքին։

5. Մինչև 16 տարեկան կազմակերպված մանուկները անդամակցում են ՄՈՊՐ-ին միայն կոլեկտիվներով։ Ամբողջ կոլեկտիվին տրվում է մի անդամատոմս։

6. Անդամակցության հիմքն է՝ 1, կատարյալ հոժարակամություն, 2, անհատական անդամագրություն և 3, նվազագույն անդամավճար՝ աշխատավորների մասսայական անդամագրության պայմանով։

7. Անդամները պարտավոր են գործոն աջակցություն ցույց տալ բջիջի բոլոր ձեռնարկություններին, քարոզել ՄՈՊՐ-ի գաղափարները, գրավել նոր անդամներ և կատարել ՄՈՊՐ-ի կանոնագրության բոլոր պահանջները։

8. Բջիջի անդամները տալիս են անդամագրության վճար և ամսավճարներ, ՄՈՊՐ-ի կենտկոմի սահմանած չափով։

9. Մանկական կոլեկտիվները տարեկան անդամավճար են տալիս՝ ՄՈՊՐ-ի գավառական բաժանմունքի հատկապես սահմանած չափով։

Ծանոթություն. Գյուղացիական բջիջներում անդամավճարը կարելի է տալ մթերքներով՝ դրամական վճարի համեմատ։

10. Մի կազմակերպության յուրաքանչյուր անդամ այլ կազմակերպության գործունեության շրջանը տեղափոխվելիս՝ ընդունվում է վերջնի անդամ, հաշվակցելով մինչ այդ տրված անդամավճարները,

III. ԲՋԻՋԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

11. Բջիջի մարմիններն են.

ա, ընդհանուր ժողով,

բ, բջիջի բյուրոն և

գ, վերաստուգիչ հանձնաժողով։

12. Ընդհանուր ժողովը բջիջի գերագույն մարմինն է և գումարվում է ամիսն առնվազն մի անգամ։

Ծանոթություն. Գյուղում ժողովները գումարվում են, յերբ հնարավոր է լինում, բայց վոչ պակաս քան յերկու ամիսը մի անգամ։

13. Ընդհանուր ժողովի իրավասությանն է վերաբերում.

ա, բյուրոյի և վերաստուգիչ հանձնաժողովի ընտրությունը.

բ. բյուրոյի և վերաստուգիչ հանձնաժողովի տեղեկագրները, հեղափոխական շարժման, սպիտակ տերորի մասին և այլ զեկուցումներ լսելը.

զ, նոր անդամների հաստատությունը և նրանց հեռացնելը.

զ, աշխատանքների ծրագրի քննությունն ու հաստատությունը.

ե, այլ և այլ հանձնաժողովների ընտրություն՝ կամպանիաներ անցկացնելու, ՄՈՊՐ-ի անկյուններ, յերեկույթներ կազմակերպելու համար և այլն։

14. 15-ից վոչ պակաս անդամ ունեցող բջիջն ընտրում է 3 անդամից և 2 փոխանդամից բաղկացած բյուրո, իսկ 15-ից ավելի անդամ ունեցող բջիջները՝ 3 ից մինչև 7 անդամ և 2 փոխանդամ։

Ծանոթություն.—15-ից պակաս անդամ ունեցող բջիջն ընտրում է մի կազմակերպիչ։

15. Բյուրոյի նիստերը գումարվում են վոչ պակաս քան յերկու շաբաթը մի անգամ, այլ և հերթական կամպանիաներից առաջ։

16. Բջիջն ընտրում է 3 անդամից և 2 փոխանդամից բաղկացած վերաստուգիչ հանձնաժողով։

17. ՄՈՊՐ-ի վերադաս մարմիններն իրավունք ունին անդամներ մերժելու բջիջի զեկավար մարմինների կազմից։

18. Բջիջի բյուրոն և վերաստուգիչ հանձնաժողովը ընտրվում են վեց ամսով։

19. Բյուրոյի պարտականություններն են.

ա. ընթացիկ աշխատանքի զեկավարությունն ու բջիջի ընդհանուր ժողովներ գումարելը.

բ. 1-3 ամսվա գործունեության ծրագիր մշակելը։

գ. վերադաս մարմինների դիրեկտիվների իրագործումը.

դ. նոր անդամների ընդունելությունը.

ե. բջիջի անդամներին ակտիվ աշխատանքի դնելը՝ պարտականությունների կանոնավոր բաշխումն կատարվելով.

զ. ՄՈՊՐ-ի ակտիվ աշխատակիցների (ակտիվիստների) կազմ ստեղծելը.

ե. ՄՈՊՐ-ի կամպանիաներ նախապատրաստելն ու անցկացնելը («18 մարտի» և այլ օրեր, ՄՈՊՐ-ի կենտկոմի վորոշմամբ).

է. բջիջի անդամների ուժերով ՄՈՊՐ-ի անկյուններ կազմակերպելը.

ը. դասախոսություններ, զեկուցումներ, միտինգներ, նվագահանդեսներ, ներկայացումներ, կինոսեանսներ, քիոսկներ և այլն կազմակերպելը.

թ. խմբակներ ստեղծելը ժամանակակից հեղափոխական շարժման և քաղաքական կալանավորների կենցաղի ուսումնասիրության համար՝ մամուլի և ՄՈՊՐ-ի գրականության նյութերով.

ժ. ՍՈՊՐ-ի գրականություն, ժետոններ, նամականիշներ և բաց նամակներ տարածելը.

ժա. մասնակցություն տեղական պատի լրագրներին և հրատարակություն ՄՈՊՐ-ի հատուկ լրագրների.

ժբ. բջիջի գործունեության լուսաբանությունը մամուլի մեջ.

ժգ. ՄՈՊՐ-ի թղթակիցների ընտրություն.

ժդ. անդամավճարների և այլ գումարների կանոնավոր գանձումը.

ժե. անդամների և միջոցների հիշտ հաշվառությունը.

ժզ. հաշվեսվությունն ու միջոցները վերադաս մարմին ժամանակին հանձնելը։

20. Վերատուգիչ հանձնաժողովի ֆունկցիաներն են.

ա. վերահսկողություն անդամավճարների և այլ դրամական միջոցների ժամանակին ստացվելու վրա.

բ. վերահսկողություն միջոցներն ու հաշվեսարվությունը ճշտությամբ վերադաս մարմին հանձնելու և գործավարության կանոնավորության վրա.

գ. կանոնավոր հաշվետվություն ընդհանուր ժողովին։

21. Վերատուգիչ հանձնաժողովի անդամները կարող են ներկա լինել բյուրոյի նիստերին խորհրդակցական ձայնով։

IV. ԲՋԻՋԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՅԵՎ ՆՐԱ ԱՊՊԱՐԱՏԸ.

22. ՄՈՊՐ-ի բՋԻՋը յուր ընթացիկ աշխատանքը կատարում է տեղական կազմակերպությունների (ՀԿԿ և ՀԼԿՅԵՄ բՋԻՋներ, գործարանական կոմիտե, տեղկոմ, կինկազմ և այլն) հարաբերակցությամբ և նրանց համաձայնեցնելով։

23. ԲՋԻՋն ոգտվում է տեղական կուսակցական և արհմիութենական մարմինների ապպարատներից։

24. ՄՈՊՐ-ի բՋԻՋը յուր կնիքը չունի և գործ է ածում այն ձեռնարկության (հիմնարկության) կնիքը, որին առընթեր ինքը գտնվում է։

V. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԵՌԱՑՆԵԼԸ.

25. ՄՈՊՐ-ի անդամներն ընդունվում են անհատապես։

26. Անդամագրվելու համար բավական է գրավոր հայտարարություն տալ բՋԻՋի բյուրոյին։

27. ՄՈՊՐ-ի անդամները հեռացվում են.

ա. ՄՈՊՐ-ի կանոնադրությունը խախտելու համար.

բ. յերեք ամիս առանց հարգելի պատճառների անդամավճար չտալու դեպքում.

գ. դատարանի արատավորող վճռի հետևանքով։

VI. ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

28. ԲՋԻՋի միջոցները կազմվում են.

ա. անդամագրության վճարներից և անդամավճարներից.

բ. հոժարակամ մասնաբերություններից և նվերներից (մթերք, դրամ, արժեքավոր իրեր և այլն)

գ. ՄՈՊՐ-ի հրատարակությունների, ժետոնների, նամականիշների և այլն վաճառքից.

դ. կիրակնորյակներից և այլ ձևերի աշխատանքից՝ բացառապես հոժարակամության հիմունքով.

ե. դասախոսությունների, զեկուցումների, կինոսեանսների, քիոսկների յեկամուտներից։

29. Բոլոր միջոցները բՋԻՋը լրիվ և անհապաղ հանձնում է անմիջականորեն և բացառապես ՄՈՊՐ-ի վերադաս մարմին։

30. Ժողված գումարները թույլ չի տրվում ծախսել բՋԻՋի կարիքները հոգալու համար։

44.355

VII. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄԸ.

31. Այս կանոնագրությունը կարող է փոփոխել ու լրացնել ՄՈՊՐ ի կենտկոմը։

VIII. ԲՋԻՋԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ.

32. Բջիջի լիկվիդացիան կարող է տեղի ունենալ՝
ա. ՄՈՊՐ-ի կենտկոմի վորոշմամբ.
բ. ձեռնարկության, հիմնարկության կամ կազմակերպության լիկվիդացիայի դեպքում։
33. Լիկվիդացիայի կարգը սահմանում է ՄՈՊՐ-ի կենտկոմը։

Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Հ. Ս. Ա. Публичная Б[illegible]
7/II 1927
Ա. ՄԱՄՄԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0229103